ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԵՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՍԵՒԱՆ

7.

ԱՄԱՅԻ եւ կարմիր մի ափի մօտ, երեկոն մոխրագոյն լաթի նման ծալում է հորիզոնը ու դանդաղօրէն քարշ գալիս։

Առում են՝ հասել ենք։

Ո՞ւր ենք հասել։ Ափը մերկ է մուրացկանի երկարած ձեռքի նման։ Կեանքի ոչ մի նշոյլ կայ՝ ոչ տուն, ոչ մշակումի որեւէ հետք։

Իշխանութիւնը հեռադիտակներով պրպտում է հեռուները, մինչ նաւը իր երիտասարդ աքլորի կոկորդն է քերում եւ ջղայնացած, կամուրջների տակ կուտ փնտռող փոքրիկ ձուկի նման շարժուն, դէս դէն է դառնում։

Ո՞ւր ենք հասել, մե՛նք, լուակեաց ծովի արգոնաւորդներս, երկնքի դիզուած շերտերի տակ կանգնած, հոգիների թեքուած ապակիների հեռադիտակը խորհրդաւոր անապատի դէմ բռնած։—

Մե՛նք, դժբախտ արգոնաւորդներս։

Այդպէս, մտածում եմ. արդեօք մի օր էլ, երկար ու դժուար ճամբորդութիւնից յետոյ, չլինի՞ թէ կանգ առնենք վերջնական մի պարապի առջեւ ու տենդոտ աչքերով, ոչ միայն Ստիքսը եւ ողբերգական անցորդների նաւակը չտեսնենք, այլ նոյնիսկ այն ծանր տուներնների անկիւնաւոր խաղը, որոնց ներկայութիւնը ծածկուած լոյսերի անցքն է վկայում։

Անկարելի է ապրել եթէ անակնկալը մերթ ընդ մերթ յղնած մեր նայուածքների առջեւ պատուհան չբանայ, եթէ երկար ոպասումը թրթռացող տարածութիւններին չբաղխի, եթէ տարագրուած մի հրեշտակ՝ ցասումի եւ տրտմութեան պահերին՝ մեր հոգիների մէջ մի քիչ զարմանք եւ մի քիչ բերկրանք չմուրայ։

— Դէմքդ դեղնած է։

— Երեւի նրա համար, որ այստեղ օդը պղնձի գոյն ունի։

— Օդը եւ հողը. եթէ ոտքդ դետնին դարնես՝ կը հնչի։

— Ի՞նչ տարօրինակ է մեր այս նաւը եւ ի՞նչ տարօրինակ ենք մենք։ Կարծես երազում եմ։ Խեղճ նաւը եկել դեղերում է ամայի մի ափի մօտ, սուլում է իր շոգու ամբողջ ուժով, մարդ է կանչում — եկե՛լ ենք, եկե՛լ ենք — իսկ չորացած մացառով ծածկուած թմբերը, իսկ կարծր, քարացած հողը չի էլ պատասխանում։ Եկե՞լ էք, դէ ի՞նչ անեմ որ եկել էք։ Տեսէք մարդկանց չուարած եւ մտահոգ դէմքերը. աղքատիկ երախտաների նման աչքերով մարդ են մուրում եւ հեռադիտակներով խուսափող հորիզոն են որսում։ Սրտաճմլիկ տեսարան է, չէ՞... Իսկ մենք ուղղակի ծիծաղելի ենք եւ դժբախտ։ Դժբախտ հիւրեր...

— Բլուրի յետեւ կարծես փոշի է բարձրանում։

— Գալիս են, գալիս են...

Իշխանութիւնը արագօրէն վերարկուները հագնում է, կոճկւում վերից վար, գլխարկը ուղղում եւ հանդիսաւոր դիրք բռնում։

Բլուրի վրայից, խոկալէս ձիաւորների մի խումբ սրարշաւ իջնում է դէպի ափը։ Սանձերը լարւում են եւ ձիերը խրխնջալով կանգ են առնում շարքով։ Նաւը, այս անգամ հանդիսաւոր եւ ուրախ կերպով, երեք անգամ սուլում է։ Նստում ենք նաւակ ու մօտենում ափին։ Նոր-Բայազէտի Գործկոմը եկել է դիմաւորելու Հանրապետութեան բարձրագոյն իշխանութիւնը. ձեռքը տարել է ճերմակ փափախին եւ զինուորական բարեւ է տալիս։ Նայում եմ. մանկութեան ժամանակ տեսած, կովկասեան լեռնցիների կեանքից առած, միամիտ պատկերներն են յիշեցնում։ Շամիլի կռիւները, աւլների առջեւ կանգնած չէրքէզները, Լերմօնտովի բանաստեղծութիւնների ուժան հատորների գծանկարները։

Ցամենայն դէպս, ձիաւորների քառատրոփ այս մուտքը, շարք կանգնելը, բարեւելու

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան